ԽՍՀՄ ՆԱԽԱԳԱՀ Մ.Ս.ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Մեծարգոյ Միխայիլ Սերգեեւիչ:

Մենք հիմա ուզում ենք եւ չենք կարող չանդրադառնալ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կոնֆլիկտի էութեանը: Մենք միշտ եղել ենք այն տեսակէտի կողմնակիցը, որ այդ, ինչպէս նաեւ միւս կոնֆլիկտները, պէտք է վճռուեն ոչ թէ ուժով ու արիւնահեղութեամբ, այլ քաղաքական միջոցներով:

Բայց այն, ինչ այժմ կատարւում է ԼՂԻՄում, ԼՂԻՄին սահմանակից հայկական գիւղերում, Հայաստանի՝ Ադրբեջանի սահմանակից գիւղերում, հրէշաւոր է: Բանակի, նրա ռազմական հզօրութեան օգտագործմամբ ջախջախուած են հայկական գիւղեր, բռնագաղթի է ենթարկւում հայ ազգաբնակչութիւնը, բազմաթիւ սպանուածներ ու վիրաւորներ կան: Անյայտ կորել են խաղաղ բնակիչներ, բժիշկներ, անյայտ է հարիւրաւոր պատանդների ճակատագիրը... Ոտնահարւում են ոչ միայն ողջ քաղաքակիրթ աշխարհում ընդունուած մարդկային իրաւունքները, այլեւ արիւն թափւում, բանակը սեփական երկրի սահմաններում գործողութիւններ է իրականացնում սեփական ժողովրդի մի մասի դէմ:

Ամենից առաջ անհրաժեշտ է դադարեցնել արիւնահեղութիւնը, բռնութիւնները, հայ ազգաբնակչութեան բռնի տեղահանումները:

Անհրաժեշտ է ազատել պատանդներին եւ դատապարտել միջէթնիկական եւ այլ կոնֆլիկտների լուծման այդ բարբարոսական ձեւերը:

Բռնութիւնը չի կարող յանգեցնել խաղաղութեան եւ համաձայնութեան, եթէ նոյնիսկ այն, բռնութիւնը, յաջողութեամբ է իրագործւում: Հենց բռնութիւնների յաջող իրականացումը երկրում, վախեցնում է մեզ, նրա համար է վախեցնում, որ անհրաժեշտաբար հարց է առաջանում. ժողովրդավարական, իրաւական պետութի՞ւն ենք կառուցում, թէ արդէն ո՞ր երրորդ անգամ, այլ ճանապարհով ենք գնում:

Երկրի գիտական մտաւորականութիւնը դիմում է Ձեզ կոչ անելով օգտագործել Ձեզ տրուած լիազօրութիւնները եւ Ձեր ազդեցութիւնը արիւնահեղութիւնը անյապաղ դադարեցնելու համար:

Ակադեմիկոս ԳՈԼԴԱՆՍԿԻ Վ.Ի.
Գիտ. դոկտոր ՋԵԼԻՆՍԿԻ Է.Ս.
Ակադեմիկոս ԲԱՐՍՈՒԿՈՎ Վ.Լ.
Ակադեմիկոս ՕԲՐԱՋՑՈՎ Ի.Ֆ.
Ակադեմիկոս ԳԱՋԵՆԿՕ Օ.Գ.
Ակադեմիկոս ԱԻԴՈՒԵԻՍԿԻ Վ.Ս.
Ակադեմիկոս ՎՈԼՊԻՆ Մ.Ե.
Թղթակից անդամ ԿԼԻՄՈՎ Դ.Մ.
Թղթակից անդամ ԳՐԻԳՈՐԵԱՆ Ս.Ս.
Ակադեմիկոս ՎԱԴԻՄԻՐՈՎ Վ.Ս.
Ակադեմիկոս ՋՈՒՌՏՈՎ Ի.Ա.
Գիտ. դոկտոր ԼԵՒԻՆ Վ. Ի.
Ակադեմիկոս ԳՎԻՇԻԱՆԻ Դ.Մ.
Ակադեմիկոս ՄՈԻՍԵԵՒ Ն.Ն.
Ակադեմիկոս ԵՆԻԿՈԼՈՊՈՎ Ն.Ս.
Թղթակից անդամ ՄԱՍՏՐՈՒԿՈՎԱ Տ.Ս.
Գիտ. դոկտոր ՍԵՐԳԷԵՒ Վ.Ա.
Ակադեմիկոս ՉՈՐՆԻՅ Գ.Գ.
Ակադեմիկոս ՍԵԴՈՎ Լ.Ի.
Ակադեմիկոս ՍԻՄՈՆՈՎ Պ.Վ.